

Ք Ա Ղ Վ Ա Ճ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց
20 հունվարի 2005 թվականի N2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգին համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին 6-ամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ստեղծման և զարգացման 2005-2010 թվականների ծրագիր:

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայեցակարգի նպատակը երկրի կայուն և անվտանգ զարգացումն ու մրցունակությունը, բարենպաստ ինովացիոն միջավայր ապահովող, համաշխարհային տնտեսական համակարգում տնտեսական և գործընկերային գրավչություն ունեցող ինովացիոն ազգային համակարգի հետևողական ձևավորմանը, նրա հիմքերը դնելու համար անհրաժեշտ ամենակարևոր տարրերի և ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացմանն ուղղված քաղաքականության մոտեցումների և սկզբունքների ամրագրումն է:

Հայեցակարգի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի զարգացման այնպիսի մոդելի ընտրության հրամայականով, որի հիմքում, առկա բնական պաշարների և տրանսպորտային ուղիների սահմանափակումների պայմաններում, դրված կլինի գիտելիքների գործնական կիրառությունը՝ բնակչության կենսամակարդակի ու երկրի տնտեսության մրցունակության բարձրացման, շրջակա միջավայրի պահպանության և պաշտպանունակության ամրապնդման նպատակով:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող՝ տնտեսության զարգացմանը նպաստող կարևորագույն խնդիրներից է համաշխարհային շուկայում տեղական արտադրության ապրանքների մրցունակության բարձրացմանը նպաստելը: Հանրապետության գիտատեխնիկական ներուժը որոշակի հնարավորություններ ունի առևտրային արժեք ներկայացնող

ապրանքների և տեխնոլոգիաների ստեղծման համար և բարենպաստ կազմակերպատնտեսական միջավայր ստեղծելու դեպքում կարող է դառնալ մտավոր և նյութական շահավետ ներդրման ոլորտ:

Տնտեսապես զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ինովացիոն գործունեությունը և գիտատար արտադրությունները հանդիսանում են տնտեսության ռեալ, արագ զարգացող և արդյունավետ ճյուղ, որը հսկայական և աճող ազդեցություն ունի տնտեսության մյուս ճյուղերի վրա: Գիտատեխնիկական գործունեության արդյունքների օգտագործմամբ ստեղծված տեխնոլոգիաները և արդյունաբերական նորամուծությունները պետության հիմնական ռեսուրսներից են: Հայաստանի գիտատեխնիկական համալիրի հնարավորությունների ու նվաճումների օգտագործումը և գիտատեխնիկական գործունեության արդյունքների ներգրավումը տնտեսական շրջանառության մեջ պետք է դիտարկվի որպես տնտեսության զարգացման առանցքային ուղղություն:

Ազգային ինովացիոն համակարգի ստեղծումը ժամանակակից տնտեսության իրական հատվածի և ենթակառուցվածքի զարգացման ամենաարդյունավետ ճանապարհն է: Այն փաստը, որ հասարակության զարգացման ներկա փուլում ինովացիոն գործունեությունը կարող է դառնալ կայուն տնտեսական զարգացման հիմնական գործոն, համաշխարհային շուկայում մրցունակության հիմք և սոցիալական խնդիրների լուծման բանալի, հայտնի է արդեն մի քանի տասնամյակ: Գիտական մշակումների ներդրման առավել արդյունավետ ճանապարհն անցնում է համեմատաբար փոքր ծախսերով և կարճ ժամկետում մրցունակ արտադրանք մշակելու ընդունակ ինովացիոն ֆիրմաների ցանցի միջով: Ինովացիոն ձեռնարկատիրության զարգացումը հնարավորություն կտա շուկայական բարեփոխումների և տնտեսության աշխուժացման գործընթացում ներգրավել գիտատեխնիկական ներուժը:

Ինովացիոն գործընթացի վրա ազդող գործոններն անընդհատ փոփոխվում են: Եթե անցյալ դարի 50-ական թվականներին արևմուտքում գործում էր ինովացիայի գծային մոդելը, որի համաձայն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները համարվում էին պետության ինովացիոն գործունեության միակ և հիմնական աղբյուրը, ապա 60-ական թվականներից այս մոտեցումն սկսեց փոխվել: Նախ, որպես որոշիչ գործոն սկսեց դիտարկվել շուկայի պահանջարկը: ԱՄՆ-ի,

Ճապոնիայի արևմտաեվրոպական երկրների և ԽՍՀՄ-ի վարած ինովացիոն քաղաքականության համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինովացիայի առաջացումը ու տարածումը գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներին զուգահեռ ներառում է նաև ազգային կրթական և գիտական համակարգին բնորոշ, ինչպես նաև բազմաթիվ այլ գործոններ, որոնցից են, օրինակ, փոխադարձ կապը ֆիրմաների, արտադրողների և սպառողների միջև, ֆինանսավորման աղբյուրները, աշխատանքի շուկան, պետության վարած քաղաքականությունը և այլն:

Ինովացիոն գործունեության նկատմամբ նման մոտեցումներն անխուսափելիորեն հանգում են ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանը, որը ենթադրում է ոչ միայն միակողմանի պատճառահետևանքային կապեր՝ ուղղված գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներից դեպի ինովացիոն ծրագրեր, այլև, առաջին հերթին, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, կազմակերպական և այլ գործոնների միջև փոխադարձ կապերի համակարգ:

Որպես գիտատեխնիկական ոլորտի զարգացման խոչընդոտ, հիմնականում դիտարկվում է պետության կողմից գիտության անբավարար ֆինանսավորումը, ինչը հիմնախնդրի միայն մեկ կողմն է, և ըստ որում՝ բավական պատրանքային, քանի որ կարևոր է ոչ միայն հատկացվող միջոցների ծավալը, այլև ինչպես ում և ինչ մեխանիզմների հիման վրա է այն իրացվում:

Այժմ, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների, ՀՀ պետական բյուջեից գիտությանը հատկացվող միջոցների մոտ 80%-ը հատկացվում է հիմնարար հետազոտություններին և միայն 20%-ը՝ կիրառական ուղղվածություն ունեցող մշակումներին: Մինչդեռ, օրինակ ԱՄՆ-ում միջոցների 16%-ն է հատկացվում հիմնարար հետազոտություններին, 26-28%-ը՝ կիրառական հետազոտություններին, իսկ 65%-ը՝ փորձակոնստրուկտորական աշխատանքներին և տեխնոլոգիական մշակումներին:

Օրենսդրական դաշտի թերի լինելը, ինովացիոն ենթակառուցվածքի զարգացման ցածր մակարդակը՝ գործընթացն արգելակող բոլոր գործոնները այս կամ այն չափով կապվում են պետության գործունեության հետ: Պետական սահմանափակ ֆինանսավորման, ինչպես նաև կազմակերպությունների սեփական

դրամական միջոցների դեֆիցիտի պայմաններում ինովացիոն գործունեության ակտիվացման կարևորագույն պայման է ոչ պետական աղբյուրներից ֆինանսների ներգրավումը տեխնոլոգիաների առևտրայնացման համար: Ինովացիոն ոլորտում մասնավոր կապիտալի ներգրավման համար մեծ հեռանկարներ կբացի տեխնոլոգիական նախագծերի ֆինանսավորման վենչուրային և լիզինգային համակարգի ձևավորումը: Մասնավոր ներդրողների ռիսկերն իջեցնելու համար անհրաժեշտ է նախատեսել համապատասխան պետական երաշխիքներ և պետության մասնակցությունը վենչուրային հիմնադրամներում:

Ինովացիոն համակարգի զարգացման և արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ենթակառույցներն ստեղծելու նպատակով պետք է կատարելագործվի համապատասխան օրենսդրական դաշտը: Առաջին հերթին անհրաժեշտ է մշակել և ընդունել «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, որտեղ պետք է հստակ սահմանվեն՝

- պետության կողմից ինովացիոն քաղաքականության բնագավառում ռազմավարությունը,

- պետության ինովացիային քաղաքականության բնագավառում լիազորված մարմինների գործառույթները,

- պետության կողմից ինովացիոն գործունեության աջակցության (այդ թվում՝ ֆինանսական) ձևերը և մեթոդները,

- ինովացիոն ազգային համակարգի ձևավորման սկզբունքները, այդ դաշտում գործող սուբյեկտների և ինովացիոն գործունեության օբյեկտների սահմանումները,

- ինովացիոն արդյունքի իրացման նպաստելուն ուղղված՝ պետության կողմից իրականացվող գործառույթները,

- ինովացիոն համակարգի բաղկացուցիչ մասերի, մասնավորապես, տեխնոպարկերի, տեխնոլոգիական ինկուբատորների, վերլուծական-տեղեկատվական համակարգի ձևավորման և գործունեության հիմնական սկզբունքները ,

- ինովացիոն հիմնադրամների ձևավորման, վենչուրային կապիտալի գործունեության ձևավորման և շրջանառության օրենսդրական հիմքերը:

Ինովացիոն գործունեության զարգացումն անհնար է առանց մտավոր սեփականության պահպանման և պաշտպանության նորմատիվ-իրավական բազայի

անհրաժեշտ կատարելագործման, այն տնտեսական շրջանառության մեջ մտցնելու, արտադրանքի նորմերը, ստանդարտները և սերտիֆիկացման համակարգերն այդ բնագավառում համաշխարհային մոտեցումներին համապատասխանեցնելու:

Ինչպես տնտեսության, այնպես էլ հասարակական կյանքի բոլոր մյուս բնագավառների զարգացման հետ սերտագույն կերպով միահյուսված է կրթության համակարգը, որի՝ հասարակության կրթական պահանջմունքների բավարարման կարողությունը սահմանում է երկրի տնտեսական զարգացման հեռանկարները:

Ակադեմիական գիտական ինստիտուտների, պետական գիտական կենտրոնների և բուհերի ասպիրանտուրաներում և դոկտորանտուրաներում գիտատեխնիկական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը պետք է առաջին հերթին հաշվի առնեն ինովացիոն ազգային համակարգի պահանջմունքները, գերակայությունները: Գիտության և բարձրագույն կրթության փոխկապակցման, կառուցվածքի ռացիոնալացման, համագործակցված գործունեության կարևորագույն նպատակը պետք է լինի գիտակրթական համալիրների ստեղծումը և զարգացումը:

Օրենքով և այլ իրավական ակտերով պետք սահմանվեն նաև՝

- գիտատեխնիկական քաղաքականության բնագավառում մի շարք իրական նպատակների ու խնդիրների, ինովացիոն ռազմավարության ուղղությունների, առաջնահերթ ինովացիոն ծրագրերի և նախագծերի աջակցման մեխանիզմների ընտրությունը և սահմանումը,

- կազմակերպությունների տեխնոլոգիական զինվածության բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության կոնկրետ ուղղությունների և միջոցառումների մշակումը՝ հենվելով միջազգային փորձի վրա: Նոր տեխնոլոգիաներ յուրացնելու և կատարելագործելու՝ տեխնոլոգիական ունակության տեսանկյունից կազմակերպությունների հնարավորությունները գնահատելու համար աուդիտի իրականացումը,

- գլոբալ մրցունակության ցուցանիշների ինդեքսի գծով ցածր վարկանիշ պայմանավորող գործոնների վերլուծությունը և այդ գործոնների չեզոքացման քաղաքականություն մշակելը,

- ինովացիոն ծրագրերի ֆինանսավորման գերակա ուղղությունների համապատասխան պետական ծախսերի նախատեսումը,

- մրցութային հիմունքներով ՀՀ պետական բյուջեից ինովացիոն ծրագրերի իրականացման համար տրամադրվող ֆինանսավորման աճի կոնկրետ և հստակ ժամանակացույց կազմելը,

- առաջարկվող նախագծերի գնահատման համար պարզ, թափանցիկ և բոլորի համար հավասար կարգ մշակելը,

- պետության կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների առևտրայնացման խթանման համար կոնկրետ մեխանիզմներ մշակելը:

Մույն հայեցակարգում ամրագրված սկզբունքների հիման վրա կմշակվի Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ստեղծման և զարգացման 2005-2010թթ. ծրագիր, որտեղ, ըստ տարիների, կներկայացվեն կատարվելիք աշխատանքների և ֆինանսավորման ծավալները, լիազորված պետական մարմիններն ու ակնկալվող արդյունքները՝ համապատասխան հիմնավորումներով: